Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 8

Վանաձորի համայնքի ավագանու արտահերթ նիստի՝ կայացած 26.08.2015թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Ս.Ղամբարյանը, Ա.Հարությունյանը, Կ.Պառավյանը, Ա.Օհանյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Գրիգորյանը, Ս.Աղաբեկյանը, Գ.Շահինյանը, Ա.Ափինյանը, Ս.Հակոբյանը, Ա.Փելեշյանը,Վ.Դոխոյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Գ.Քալանթարյանը, Ա.Մատինյանը, Ա.Այվազյանը, Հ.Մովսիսյանը, Խ.Վարդանյանը, Ա.Խաչատրյանը, Դ.Սիմոնյանը:

Նիստին մասնակցում էին Ն.Սարդարյանը, Գ.Սիմոնյանը, Տ.Պապանյանը, Հր.Նազարյանը, Ա.Վերանյանը, Լ.Ստեփանյանը, Տ.Գրիգորյանը, Վ.Սահակյանը, Է.Արզումանյանը, ԶԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Այնուհետև ներկայացվեց նիստի օրակարգը:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օ ր ա կ ա ր գ՝

1. **Վանաձորի համայնքի ավագանու 2015թ. օգոստոսի 24-ի թիվ 01 ուղերձում փոփոխություններ կատարելու մասին**

զեկ.՝ Գ.Սիմոնյան

1.ԼՍԵՑԻՆ - **Վանաձորի համայնքի ավագանու 2015թ. օգոստոսի 24-ի թիվ 01 ուղերձում փոփոխություններ կատարելու մասին**

զեկ.՝ Գ.Սիմոնյան

Քննարկված հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին ավագանու անդամներ Ս.Ղամբարյանը, Ա.Ափինյանը, Վ.Դոխոյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Օհանյանը, Գ.Շահինյանը, Կ.Պառավյանը, Ս.Աղաբեկյանը, որոնք իրենց ելույթներում շեշտեցին նախորդ նիստում ընդունված ուղերձում նշված թերությունների մասնագիտական հիմնավորման անհրաժեշտության մասին: Ավագանու անդամ Ս.Աղաբեկյանն առաջարկեց ավագանու անդամների, պատվիրատու և կապալառու, հասարակական և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից հարցի լրացուցիչ ուսումնասիրման և համատեղ քննարկման նպատակով չեղյալ ճանաչել Վանաձորի համայնքի ավագանու 2015թ. օգոստոսի 24-ին ընդունած թիվ 01 ուղերձը:

Առաջարկությունը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 10, ձեռնպահ՝ 1 (Վ.Դավիթավյան), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Ավագանու անդամ Ա.Օհանյանը քվեարկությանը չմասնակցեց:

Որոշվեց ս/թ սեպտեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ին, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկել ջրամատակարարման համակարգի հետ կապված խնդրահարույց հարցերը:

Նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

Ս.ՂԱՄԲԱՐՅԱՆ Ս.ԱՂԱԲԵԿՅԱՆ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ.ՊԱՌԱՎՅԱՆ

Վ.ԴԱՎԻԹԱՎՅԱՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ՕՀԱՆՅԱՆ Վ.ԴՈԽՈՅԱՆ

Գ.ՇԱՀԻՆՅԱՆ Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

Ս.ՀԱԿՈԲՅԱՆ Ա.ԱՓԻՆՅԱՆ

Համայնքի ղեկավար՝
ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց Հրահատ Նազարյանը _____